



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS

1.1 (27)

Естественные и физико-математические науки

(География и геология, информатика и прикладная математика,
биология, химия, фармацевтика, физика и радиоп физика)

Natural and Physical-Mathematical Sciences

(Geography and Geology, Informatics and Applied Mathematics,
Biology, Chemistry, Pharmacy, Physics and Radiophysics)

ЕРЕВАН - YEREVAN
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS
2019

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829-4367

ԵՊՀ ՈՒԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1.1 (27)

Բնական և ֆիզիկամաթեմատիկական գիտություններ

(աշխարհագրություն և երկրաբանություն, ինֆորմատիկա և կիրառական
մաթեմատիկա, կենսաբանություն, քիմիա, ֆարմացիա, ֆիզիկա և ռադիոֆիզիկա)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2019

Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
Издаётся по решению Ученого совета ЕГУ
Published by the resolution of the Academic Council of YSU

Խմբագրական խորհուրդ՝

ա.գ.դ., պրոֆ. Թ. Վարդանյան
կ.գ.դ., պրոֆ. Լ. Նավասարդյան
ֆ.մ.գ.դ., պրոֆ. Ռ. Ալավերդյան
ֆ.բ.գ.դ., դոց. Ա. Բալաբեկյան
ֆ.մ.գ.դ., դոց. Ե. Մամասախլիսով
ֆ.մ.գ.դ., դոց. Տ. Հակոբյան
ա.գ.թ., դոց. Ս. Սուվարյան
ա.գ.թ., դոց. Գ. Ալեքսանյան
Ե.գ.թ., դոց. Մ. Գրիգորյան
կ.գ.թ., դոց. Հ. Փանոսյան
տ.գ.թ., դոց. Հ. Հարոյան
ֆ.մ.գ.թ., դոց. Ս. Մխիթարյան
ք.գ.թ., դոց. Ի. Ալեքսանյան
ք.գ.թ., դոց. Ա. Մարտիրոսյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Մանասեյան
ֆ.մ.գ.թ., ասիստ. Ա. Վարդանյան
ֆ.մ.գ.թ. Մ. Ալեքսանյան
ֆ.մ.գ.թ. Տ. Աբրահամյան

Редакционная коллегия:

д.г.н., проф. Т. Ваданян
д.б.н., проф. Л. Навасардян
д.ф.м.н., проф. Р. Алавердян
д.ф.м.н., доц. А. Балабекян
д.ф.м.н., доц. Е. Мамасакхлисов
д.ф.м.н., доц. Т. Акобян
к.г.н., доц. С. Суварян
к.г.н., доц. Г. Алексанян
к.г.н., доц. М. Григорян
к.б.н., доц. О. Паносян
к.т.н., доц. О. Ароян
к.ф.м.н., доц. С. Мхитарян
к.х.н., доц. И. Алексанян
к.х.н., доц. А. Мартирян
к.ф.м.н., ассист. А. Манаселян
к.ф.м.н., ассист. А. Ваданян
к.ф.м.н. М. Алексанян
к.ф.м.н. Т. Абрамян

Editorial Board

DSc, Prof. T. Vardanyan
DSc, Prof. L. Navasardyan
DSc, Prof. R. Alaverdyan
DSc, Associate Prof. A. Balabekyan
DSc, Associate Prof. Y. Mamasakhlishov
DSc, Associate Prof. T. Hakobyan
PhD, Associate Prof. S. Suvaryan
PhD, Associate Prof. G. Aleksanyan
PhD, Associate Prof. M. Grigoryan
PhD, Associate Prof. H. Panosyan
PhD, Associate Prof. H. Haroyan
PhD, Associate Prof. S. Mkhitaryan
PhD, Associate Prof. I. Aleksanyan
PhD, Associate Prof. A. Martiryan
PhD, Assistant Prof. A. Manaselyan
PhD, Assistant Prof. A. Vardanyan
PhD M. Aleksanyan
PhD T. Abrahamyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

Հրատարակության նախապատրաստող ստորաբաժանում՝ ԵՊՀ ՈՒԳԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 60) 71 01 94,
Էլ. փոստ՝ sss@ysu.am
ԵՊՀ ՈՒԳԸ հրատարակումների կայք՝ www.ssspub.y-su.am.

Սարգսյան Անի

ԵՊՀ, Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ
բակալավրիատի ուսանող
Գիտական ղեկավար՝ ա.գ.թ., դոց. Վ. Մարգարյան
Էլ. փոստ՝ ani-sargsyan97-97@mail.ru

**ՍԵՎԱՆԱ ԼՃԱՎԱԶԱՆԻ ՕԴԻ ԷՔՍՏՐԵՄԱԼ ԲԱՐՁՐ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ
ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ՎԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Տնտեսության զարգացման, տարածքային կազմակերպման և արդյունավետ պլանավորման, ինչպես նաև մարդու բնականոն կենսագործունեության ապահովման գործում մեծապես կարևորվում է օդի գետնամերձ շերտի էքստրեմալ ջերմաստիճանների ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունը, դրանց տարածաժամանակային բաշխման օրինաչափությունների վերլուծությունն ու գնահատումը: Այդ նկատառումով, սույն աշխատանքում խնդիր է դրվել բացահայտելու ու վերլուծելու ուսումնասիրվող տարածքի օդի ջերմաստիճանի էքստրեմալ բարձր արժեքների (բացարձակ առավելագույն ջերմաստիճանների) փոփոխության դինամիկան և գնահատել դրանց ազդեցությունը շրջակա բնականոշաֆտային միջավայրի վրա:


Աշխատանքում բացահայտվել և վերլուծվել են Սևանա լճի ավազանի օդի ջերմաստիճանի էքստրեմալ բարձր ցուցանիշների (բացարձակ առավելագույն) ձևավորման առանձնահատկությունները, փոփոխության դինամիկան, վերլուծվել է կլիմայափոփոխության ազդեցությունը տարածաշրջանի բնականոշաֆտային միջավայրի վրա, պարզաբանվել են առկա հիմնախնդիրները: Քննարկվել է նաև գլոբալ կլիմայափոփոխության նկատմամբ ուսումնասիրվող բնատարածքի խոցելիությունը, մշակվել են կլիմայի փոփոխության բացասական հետևանքները մեղմելու ուղիներ:

Մեթոդաբանություն. Առաջադրված խնդիրների լուծման նպատակով աշխատանքում որպես տեսական և տեղեկատվական հիմք ծառայել են՝ համապատասխան ուսումնասիրությունները, տպագիր աշխատանքները, ՀՀ կառավարության որոշումները, հաշվետվությունները, զարգացման ծրագրերը, նախագծերը, աշխատանքային պլանները, զեկույցները: Որպես ելակետային նյութ աշխատանքում օգտագործվել են ուսումնասիրվող տարածքի ԱԻՆ հիդրոմետ ծառայության օդերևութաբանական կայանների մթնոլորտային տեղումների բազմամյա դիտարկումների փաստացի տվյալները (1966-2016 թթ.), ինչպես նաև կլիմայական տեղեկագրերը: Որպես մեթոդաբանական հիմք աշխատանքում կիրառվել են՝ մաթեմատիկա-վիճակագրական, արտարկման, վերլուծության, կոռելյացիոն մեթոդները:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզում: Արևելքից եզրավորվում է Արեգունի, Սևանի, Արևելյան Սևանի, հարավից՝ Վարդենիսի, արևմուտքից՝ Գեղամա և Փամբակի լեռնաշղթաներով: Երկարությունը 120 կմ է, լայնությունը՝ 30-80 կմ, տարածությունը՝ 4891 կմ²:

Լճավազանը տարածվում է 1900-3500 մ բարձրությունների սահմաններում: Առավելագույն մակերես են զբաղեցնում 2000-2800 մ բարձրությունները, ավազանի միջին բարձրությունը 2390 մ է [2]:

Արդյունքներ և քննարկում. Աշխատանքում օդի ջերմաստիճանի փոփոխության հարցերը քննարկվել և ուսումնասիրվել են ըստ օդերևութաբանական առանձին կայանների (Նկար 1) փաստացի դիտարկումների արդյունքների:



Նկար 1. Սևանի լճավազանի օդերևութաբանական կայանները [2]
 5. Շրժա, 12. Մեծ Մասրիկ, 21. Մարտունի, 35. Գավառ, 36. Նորատուս, 38. Եռաթմբեր, 40. Սևան

Օդի և հողի ջերմաստիճանների և դրանց փոխադարձ կապերի ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն տնտեսության տարբեր ճյուղերի, այլև ջրաբանական տարբեր խնդիրներ պարզաբանելու համար, որոնք ունեն կիրառական զգալի նշանակություն:

Օդերևութ. կայաններ	Ամիսներ												Տարի
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Սեմյոնովկա	-7.3	-7.0	-3.8	2.5	7.2	10.5	13.3	13.4	10.0	5.4	0.3	-4.8	3.3
Շորժա	-4.6	-4.5	-2.1	5.0	9.9	13.9	17.2	17.6	14.5	8.8	8.5	-1.6	6.4
Մասրիկ	-8.4	-7.8	-3.0	4.4	9.3	12.8	16.1	16.0	12.5	7.2	1.2	-5.3	4.5
Վարդենիս	-8.3	-6.8	-2.7	4.1	9.5	12.9	16.3	16.1	12.2	6.7	0.9	-5.1	4.7
Մարտունի	-5.0	-4.8	-1.3	5.3	10.0	13.3	16.3	16.2	13.2	8.4	2.9	-2.3	6.1
Վարդենյաց	-8.3	-8.0	-4.8	1.8	7.0	10.8	14.4	14.6	11.1	5.5	-0.5	-6.1	3.1
Գավառ	-6.8	-6.1	-2.2	4.6	9.2	12.4	15.6	15.7	12.2	6.9	1.3	-3.9	4.7
Նորատուս	-5.6	-5.5	-2.1	3.6	8.4	12.2	15.7	16.0	12.8	7.9	2.1	-3.3	5.3
Եռաթմբեր	-12.3	-12.4	-9.6	-4.5	0.3	4.7	8.9	8.8	5.3	-0.9	-6.3	-9.6	-2.3
Սևան	-8.2	-7.3	-3.3	3.4	8.9	12.1	15.7	15.7	12.1	6.5	0.6	-5.4	4.2
Սևան լճային	-5.4	-5.5	-1.5	5.1	9.5	13.5	16.8	16.7	13.9	8.4	2.5	-2.7	6.0

Աղյուսակ 1. Օդի ջերմաստիճանի ամսական և տարեկան միջին արժեքները (°C)

Վերլուծելով աղյուսակ 1-ի տվյալները, այսինքն օդի ջերմաստիճանի ամսական և տարեկան միջին արժեքները, հասկանում ենք, որ ամենաբարձր արժեքը գրանցվել է Շորժայում (+6.4 °C), իսկ ամենացածրը՝ Եռաթմբերում (-2.3 °C):

Որպես կանոն, օդի ջերմաստիճանի ձևավորման վրա ազդում են ֆիզիկա-աշխարհագրական մի շարք գործոններ, որոնցից կարևոր են աշխարհագրական դիրքը, մթնոլորտի ընդհանուր շրջանառությունը, ռելիեֆը, լեռնաշղթաների ուղղությունը, կողմնադրությունն ու թեքությունը: Նշված գործոնների համալիր ազդեցությամբ ուսումնասիրվող տարածքն աչքի է ընկնում ջերմաստիճանային մեծ բազմազանությամբ (Աղյուսակ 1 և 2): Ընդհանուր առմամբ, օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճանը նվազում է տեղի բացարձակ բարձրության մեծացմանը զուգընթաց:

Օդերևութ. կայաններ	Ամիսներ												Տարի
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
Սեմյոնովկա	9	8	16	25	23	27	32	33	28	23	16	10	33
Շորժա	8	10	18	25	26	30	33	34	32	25	19	13	34
Մասրիկ	10	13	19	25	26	31	33	34	32	26	20	16	34
Վարդենիս	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	30
Մարտունի	11	12	18	25	26	30	32	34	30	24	18	15	34
Վարդենյաց	7	6	12	17	22	25	30	30	26	22	15	9	30
Գավառ	10	12	19	25	26	31	33	34	31	25	19	14	34
Նորատուս	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	30
Եռաթմբեր	2	2	7	10	13	19	21	23	19	13	7	3	23
Սևան	8	9	16	22	25	28	31	32	31	25	17	11	32


Սևան լճային	9	9	17	24	24	31	32	33	29	23	17	13	33
-------------	---	---	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Աղյուսակ 2. Օդի դիտված բացարձակ առավելագույն ջերմաստիճանը (°C) [2]

Դիտված բացարձակ առավելագույն ջերմաստիճանի (Աղյուսակ 2), տվյալներն ուսումնասիրելով հասկանում ենք, որ +34 °C գրանցվել է Մարտունիում, Մասրիկում, Գավառում և Շորժայում, այսինքն սրանք ամենաբարձր արժեքներն են 2011 թ. համար, իսկ նույն տարվա համար ցածր արժեքը եղել է Եռաթմբերում գրանցված +23 °C-ը:

Ուսումնասիրվող տարածքի հյուսիսային մասով ձգվում են Արեգունու, հյուսիսարևելյան մասով՝ Սևանի լեռնաշղթաները, իսկ արևելյան մասով՝ Արևելյան Սևանի լեռնաշղթան, որն օղակ է Սևանի ու Վարդենիսի լեռնաշղթաների միջև: Եթե Արեգունու և Սևանի լեռնաշղթաների՝ Սևանա լիճ նայող լանջերը զառիթափ են ու կտրտված, ապա Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների՝ Սևանա լիճ նայող լանջերը համեմատաբար մեղմաթեք են: Այստեղ լեռների հրաբխային բազմաթիվ կոներից դուրս ժայթքած լավան հրաբխային լեռնալանջերից բացի առաջացրել է նաև սարավանդներ ու քարակարկառներ: Հենց այս հատվածներում էլ՝ Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաների ու Սևանա լճի միջև գտնվող վայրերում զգալի հարթ տարածքներ կան, որոնք հարմար են հողագործության համար: Դրանք հատկապես Մասրիկի, Արգիճի գետերի ու Գավառագետի հովիտներն են: Դրանցից համեմատաբար ընդարձակը Մասրիկի դաշտն է: Այդ հարթ տարածքները ծովի մակերևույթից ունեն 1900-2200 մ բարձրություն: Ուսումնասիրվող տարածքն ունի բարեխառն ցամաքային կլիմա՝ լավ արտահայտված լեռնային գոտիականությամբ: Սևանա լճի ափամերձ գոտու (մինչև 2100 մ բարձրությունները՝ 2-12 կմ) կլիման համեմատաբար մեղմ է: 2100-3000 մ բարձրություններում հանդիպում ենք կարճատև ամառներով և ցուրտ ձմեռներով կլիմայի: Օդի ջերմաստիճանի առավելագույն ցուցանիշները դիտվում են հուլիս-օգոստոսին, իսկ նվազագույնը՝ հունվար-փետրվար ամիսներին: Առափնյա ցածրադիր շրջաններում օդի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 4.0...6.0 °C, որը սակայն, պայմանավորված միկրոկլիմայական պայմաններով՝ աչքի է ընկնում խայտաբղետությամբ: Այսպես, համարյա նույն բացարձակ բարձրություն ունեցող Մասրիկ (1940 մ) և Մարտունի (1945 մ) օդերևութաբանական կայաններում տարեկան միջին ջերմաստիճանը համապատասխանաբար կազմում է 4.5 և 6.1 °C: Միջին տարեկան ջերմաստիճանն ավելի բարձր է Արեգունի և Սևանի լեռնաշղթայի՝ լիճն ուղղված լանջերի ստորոտին: Այսպես, Շորժայում, որի բարձրությունը ծովի մակարդակից 1922 մ է, տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 6.4 °C: Սակայն, ինչ վերաբերում է օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճաններին, ապա պետք է նշենք, որ ափամերձ գոտում գտնվող օդերևութաբանական բոլոր կայաններում գրանցվում է համարյա նույն արժեքը՝ 32-34 °C:

Տարածաշրջանի մերձալայան և ալայան մարգագետիններն աչքի են ընկնում երկարատև և կայուն ձնածածկույթ ունեցող լեռնային ցուրտ կլիմայով: Հունվարին միջին ջերմաստիճանը $-10.0 \dots -14.0$ °C է, նվազագույնը հասնում է -35.0 °C-ի (Եռաթմբեր՝ 3101 մ): Ամառը զով է և կարճատև, հուլիսին միջին ջերմաստիճանը $10.0 \dots 14.0$ °C է, առավելագույնը՝ 23.0 °C:




Նկար 2. Օդի բացարձակ առավելագույն և տարեկան միջին ջերմաստիճանների կոռելյացիոն կապը, °C

Ստացվել է սերտ կոռելյացիոն կապ օդի ջերմաստիճանի տարեկան միջին և բացարձակ առավելագույն արժեքների միջև (Նկար 2): Այդ կապը կարելի է օգտագործել չուսումնասիրված կամ քիչ ուսումնասիրված տարածքների ջերմային պայմանների գնահատման համար:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Սևան օդերևութաբանական կայանում 1966-2016 թթ. ընթացքում առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից բարձր արժեքը գրանցվել է 2000 և 2003 թթ՝ կազմելով $+32.9$ °C, առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից ցածր արժեքը գրանցվել է 2009 թ. և կազմել $+24.5$ °C, իսկ միջին ջերմաստիճանը՝ $+29.1$ °C: Գավառ օդերևութաբանական կայանում առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից բարձր արժեք գրանցվել է 2003 թ.՝ կազմելով $+34.2$ °C, առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից ցածր արժեքը գրանցվել է 2009 թ. և կազմել $+24.6$ °C, միջին ջերմաստիճանը կազմել է $+24.19$ °C: Մարտունի օդերևութաբանական կայանում առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից բարձր արժեքը գրանցվել է 2015 թ.՝ կազմելով $+32.3$ °C, առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից ցածր արժեքը գրանցվել է 2009 թ.՝ կազմելով $+26.7$ °C, միջին ջերմաստիճանը՝ $+30$ °C: Վարդենյաց օդերևութաբանական կայանում

առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից բարձր արժեքը գրանցվել է 2006 թ.՝ կազմելով +29.9 °C, առավելագույն ջերմաստիճանների մեջ ամենից ցածր արժեքը գրանցվել է 2009 թ.՝ կազմելով +23.9 °C, միջին ջերմաստիճանը՝ +27.4 °C:



Նկար 3. Օդի ջերմաստիճանի էքստրեմալ բարձր արժեքների դինամիկան

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարածաշրջանում նկատվում է օդի ջերմաստիճանի էքստրեմալ բարձր արժեքների աճման միտում (Նկար 3):

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տարածաշրջանում, մասնավորապես՝ տնտեսապես առավել յուրացված լանդշաֆտային գոտում, ժամանակակից բոլոր լանդշաֆտները զգալիորեն կրել են մարդու արտադրական գործունեության ազդեցությունը, տարածքի զգալի մասը փոփոխվել է արմատապես՝ վերածվել բնակավայրերի և ագրոլանդշաֆտների:

Գեղարքունիքի տարածքի օդերևութաբանական կայանների դիտարկման շարքերի վիճակագրական վերլուծությունը ցույց է տվել, որ ուժեղ շոգերով տարեկան օրերի թիվը զգալի մեծանում է [3]:

Սույն աշխատանքում խնդիր է դրվել բացահայտել ու վերլուծել ուսումնասիրվող տարածքի օդի ջերմաստիճանի էքստրեմալ բարձր արժեքների (բացարձակ առավելագույն ջերմաստիճանների) փոփոխության դինամիկան և գնահատել դրանց

ազդեցությունը շրջակա բնականոչաֆտային միջավայրի վրա: Ստացված հաշվարկային տվյալների արդյունքում պարզ է դառնում, որ 1966-2016 թթ. ընթացքում Սևանա լճի ավազանի օդի ջերմաստիճանի էքստրեմալ բարձր ցուցանիշների ամենից ցածր արժեքները գրանցվել են 2009 թ.: Հունվարի միջին ջերմաստիճանը լճամերձ գոտում -10 °C է, ջրբաժաններում՝ -12 °C, հուլիսինը համապատասխանաբար՝ +16 °C և +8 °C:

Ուսումնասիրվող տարածքը գյուղատնտեսական կուլտուրաների մշակության կարևոր շրջաններից մեկն է, և չենք սխալվի, եթե ասենք, որ գյուղատնտեսության վարման մակարդակը որոշելու կարևոր ցուցանիշներից մեկը դաշտային աշխատանքների ժամկետների օպտիմալացումն է և դրանց համապատասխանեցումը եղանակային պայմաններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

[1] ՀՀ կլիմայական տեղեկագիր, Օդի և հողի ջերմաստիճանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն, Երևան, 2011, Լուսաբաց, I մաս, 150 էջ:

[2] **Մարգարյան Վ., Վարդանյան Թ.**, Սևանա լճի ավազանի գետային հոսքի ձևավորման և ներտարեկան բաշխման առանձնահատկությունները, «Աշխարհագրության գիտակա-ռուցողական ներուժը և գործնական կիրառումը» (Լ. Հ. Վալեսյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր), Երևան, 2011, ԵՊՀ հրատարակչություն, էջ 211-23:

[3] **Սուրենյան Գ. Հ., Խոյեցյան Ա. Վ.**, «էքստրեմալ բարձր ջերմաստիճանների առաջացման օդերևութաբանական պայմանները Գեղարքունիքում», Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2008, էջ 145-50:

Սարգսյան Անի

ՍԵՎԱՆԱ ԼՃԱՎԱԶԱՆԻ ՕԴԻ ԷՔՍՏՐԵՄԱԼ ԲԱՐՁՐ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՕՐԻՆԱԶԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ օդի բացարձակ առավելագույն ջերմաստիճան, ջերմաստիճանի փոփոխության դինամիկա, Սևանա լճի ավազան:

Աշխատանքում բացահայտվել և վերլուծվել են Սևանա լճի ավազանի օդի ջերմաստիճանի էքստրեմալ բարձր ցուցանիշների (բացարձակ առավելագույն) ձևավորման առանձնահատկությունները, փոփոխության դինամիկան, վերլուծվել է կլիմայափոխության ազդեցությունը տարածաշրջանի բնականոչաֆտային միջավայրի վրա, պարզաբանվել են առկա հիմնախնդիրները: Քննարկվել է նաև գլոբալ կլիմայափո-

խորթան նկատմամբ ուսումնասիրվող բնատարածքի խոցելիությունը, մշակվել են կլիմայի փոփոխության բացասական հետևանքները մեղմելու ուղիներ:

Саргсян Ани

АНАЛИЗ И ОЦЕНКА ЗАКОНОМЕРНОСТЕЙ ДИНАМИКИ ЭКСТРЕМАЛЬНО ВЫСОКИХ ТЕМПЕРАТУР ВОЗДУХА БАСЕЙНА ОЗЕРА СЕВАН В КОНТЕКСТЕ ИЗМЕНЕНИЙ КЛИМАТА

Ключевие слова: абсолютная максимальная температура воздуха, изменение динамики температуры, бассейн озера Севан.

В работе были выявлены и анализированы особенности формирования экстремально высоких показателей (абсолютная максимальность) температуры воздуха бассейна озера Севан, а также изменения их динамики. Было выявлено влияние изменения климата на окружение естественного ландшафта данной территории, а также были разъяснены актуальные вопросы. В статье обсуждается уязвимость изучаемой области по отношению к глобальному изменению климата, а также разработаны пути смягчения негативных последствий климатических изменений.

Sargsyan Ani

ANALYSIS AND EVALUATION OF DYNAMICS OF EXTREME HIGH TEMPERATURES IN LAKE SEVAN IN THE CONTEXT OF CLIMATE CHANGE

Key words: absolute maximum air temperature, climate change dynamics, Lake Sevan basin.

The article discusses the peculiarities of extreme high temperature indices of Lake Sevan basin, the dynamics of change, the impact of climate change on the natural landscape of the region. The existing issues have been clarified, and we have also discussed the vulnerability of the territory being studied towards the global climate change and ways of mitigating negative effects of climate change.